

ՓՈԽԱԲԵՐԱՑՄԱՆ ՊՐՈՑԵՍԻ ԼԵԶՎԱԶՈՒԵԲԱՆԱԿԱՆ
ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

ԱՆԱԼԻՏ ԳԱՐՍՅԱՆ

Լեզվական երևույթների, հատկապես իմաստաբանական ինքնատիպ երե-
վույթի՝ փոխաբերացման պրոցեսի ուսումնասիրության ժամանակ անհրա-
ժեշտ է դուրս գալ լեզվի համակարգի շրջանակներից, դիտարկել այդ երևույթի
գոյաբանական հիմքերը¹։ Փոխաբերության լեզվահոգեբանական դիտարկ-
ման միջոցով բացահայտվում են լեզվական միավորների փոխաբերական
հնարավորությունները, նրանց իմաստային զարգացման պատճառները, ինչ-
պես նաև լեզուն կրողների մոտ բառերի նշանակությունների զարգացման
երևույթը։

Փոխաբերության հիմքը բառիմաստի փոփոխությունն է, բառի գործա-
ծությունը իր հիմնական առարկայական իմաստից տարբեր իմաստով։ Բա-
ռերի շատ փոխաբերական իմաստներ տրված են բառարաններում, այնինչ
անհատական բանաստեղծական փոխաբերության ստեղծման ժամանակ ձեռք
բերած շատ իմաստներ բառի իմաստային նկարագրի մեջ չեն մտնում։ Դրանք
ավելի շուտ բառի հնարավորությունն են։

Հոգվածում դիտարկվում են բանաստեղծական փոխաբերության ստեղծ-
ման որոշ առանձնահատկություններ։

Կածանն ինձ տաներ անտառը ցախի,

Անտառն իմ գլխին ուլունկներ թափեր (ՀՍ, հ. 2, էջ 285)²։

Բանաստեղծական այս երկտողը, որտեղ ուլունկ բառը պործածված է փո-
խաբերական իմաստով, կարելի է հասկանալ այսպես՝ իմ գլխին տերևներ
թափվեին։ Բանաստեղծական պատկերը ստեղծվել է տերև բառի փոխաբեն
ուլունկ բառի փոխաբերական գործածության շնորհիվ։ Այդ երկու բառերը
իմաստային տարբեր շրջանակների են պատկանում, դժվար թե հնարավոր
լինի նրանց միջև ուղղակի կապ գտնել։ Նրանց մոտեցման հոգեբանական
հիմքը հետևյալն է՝ տերևները թափվում, հատ-հատ ընկնում են գետին.
դա բանաստեղծի (և ընթերցողի) պատկերացումներում զուգորդվում է ուլուն-
քի՝ հատիկ-հատիկ թափվելու պատկերին, և ըստ այդ նմանության էլ մո-
տեցվում, հոգեբանորեն զուգորդվում են ուլունկ և տերև հասկացությունները։

¹ Г. Б. Джаукян, О принципах построения универсальной лингвистической модели («Всесоюзная научная конференция по теоретическим вопросам языкознания», М., 1974).

² Հոգվածում օգտագործված են հետևյալ իմաստազրույթությունները. ՀՏ—Հ. Շիրազ, Քնար Հայաստանի, գիրք 2-րդ, Երևան, 1964, գիրք 3-րդ, Երևան, 1974, ՀՍ—Հ. Սահյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1975, հ. 2, Երևան, 1976, ՎՏ—Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1960.

Թիլիկ-մեկիկ առու,
Ուլունկ-ուլունկ մասուր,
Մամուռի տակ՝ մի բուռ
Պատանության մասունք (ՀՍ, հ. 2, էջ 383),

Ուլունկ բառն այս օրինակում փոխաբերացվում է հետևյալ կերպ՝ մասուրի կարմիր հատիկներն իրենց ձևով, գույնով ակամա ուլունք են հիշեցնում, այդ պատճառով էլ դրանք պատկերանում են որպես ուլունքներ:

Թանապուրի գոլորշին
Գերանին առնում,
Եվ սյունն ի վար գլոր-գլոր,
Հուլունկ էր դառնում (ՀՍ, հ. 2, էջ 14):

Այս պատկերում գոլորշուց առաջացած ջրի կաթիլները ուլունք են հիշեցնում: Այսպիսով, բառի փոխաբերական հոգեբանական հիմքը պատկերի և առարկայի ձևի նմանությունն է (ուլունք և մասուր): Բառերը կարող են փոխաբերացվել նաև ըստ առարկաների ձայնի, փայլի, գույնի, շարժման բնույթի նմանության: Լեզվում շատ տարածված՝ մարմնի մասերի անվանումների փոխաբերական գործածությունները ստեղծվում են առարկաների ձևի, ֆունկցիայի, մարդու կյանքում նրանց ունեցած դերի նմանության միջոցով, էդ. Աղայանը նշում է, որ ճիստիցով պատկերավոր մտածողության մասին, մենք պետք է կարողանանք գտնել դրա պատմա-հասարակական հիմունքը, և ոչ թե ամեն ինչ բացատրենք մի ալյուրով գիտակցությամբ, պատկերացումների այն զուգորդություններով, որոնք մեր զարգացած այժմյան նախադրությամբ են պայմանավորված»:

Փոխաբերությունը հաճախ համարվում է կրճատված համեմատություն³: Վերջինս ոճաբանական ուսումնասիրություններում դիտվում է որպես եռանդամ կառուցվածք (համեմատության պատկեր, առարկա, հատկանիշ) և նշվում է, որ փոխաբերության մեջ մեկ բառում առկա են և՛ պատկերը, և՛ առարկան⁴, փոխաբերաբար գործածված բառի առարկայական իմաստը համապատասխանում է պատկերին, իսկ փոխաբերական իմաստը՝ առարկային:

Փոխաբերությունը ծագումով կրճատված համեմատություն է, սակայն դա չի նշանակում, որ յուրաքանչյուր փոխաբերություն կարելի է վերածել համեմատության, շնայած շատ դեպքերում հնարավոր է համեմատության կրճատումով ստանալ փոխաբերություն:

Դիտարկենք հետևյալ օրինակը.

(1) Սուրիկն աղվեսի պես խորամանկ մարդ է:

Նախադասության իմաստը կապահովվի, եթե այն համաոգտենք ամեն

³ Հին սովորության համաձայն մասուրի հատիկները շարում էին և կրում որպես ուլունք:

⁴ Էդ. Աղայան, Լեզվաբանության ներածություն. Երևան, 1963, էջ 259:

⁵ Л. И. Тимофеев, Основы теории литературы, М., 1968; Б. В. Томашевский, Стилистика и стихосложение, Л., 1959; М. В. Никитин, О семантике метафоры («Вопросы языкознания», 1979, № 1); Л. Л. Квятковский, Поэтический словарь, М., 1966; М.—Н. О. Османов, Стиль персидско-таджикской поэзии, IX—X вв., М., 1974.

⁶ Б. В. Томашевский, նշվ. աշխ., էջ 224:

նզամ բաց խողնելով նախադասության մեկ անդամը.

(2) Սուրիկն աղվեսի պես մարդ է:

(3) Սուրիկն աղվեսի պես խորամանկ է:

(4) Սուրիկն աղվես մարդ է:

(5) Սուրիկն աղվեսի պես է:

(6) Սուրիկն աղվես է:

Դա ներկայացնենք սխեմայով.

/1/ Սուրիկն աղվեսի պես խորամանկ մարդ է:

/2/ Սուրիկն աղվեսի պես մարդ է: /3/ Սուրիկն աղվեսի պես խորամանկ է:

/4/ Սուրիկն աղվես մարդ է:

/5/ Սուրիկն աղվեսի պես է:


/6/ Սուրիկն աղվես է:

(1)-ում արտահայտության պլանում առկա են ասույթի բոլոր բովանդակային միավորները, աղվեսի հետ համեմատելուց դատ նշված է այն ընդհանուր հատկանիշը (խորամանկ), որի միջոցով իրականացել է համեմատությունը: (2)-ում խորամանկ հատկանիշը բառային արտահայտություն չի գտնում, իսկ բովանդակության պլանում այն տրված է, երբ մեկի մասին ասվում է, որ նա աղվեսի պես մարդ է, ինքնըստինքյան հասկացվում է, որ ըստ խորամանկության հատկանիշի է կատարվում այդ համեմատությունը: Լեզուն կրողների մոտ դա այնքան ամրակայված և տարածված է, որ բոլորովին հարկ չի լինում գործածել (1) տարբերակը, որտեղ բովանդակության պլանի բոլոր միավորները ստացել են բառային արտահայտություն: Հատկանիշի, համեմատության հիմքի (խորամանկ) առանձնացումն այս դեպքում դառնում է հավելուրդային և լեզվի տնտեսման սկզբունքի համաձայն բառային արտահայտություն չի ստանում:


(3)-ը և (5)-ը համեմատություններ են, պահպանված է համեմատող բառը: (4)-ում և (6)-ում հանդես է գալիս փոխաբերությունը, երբ ասում են՝ Սուրիկն աղվես է կամ Սուրիկն աղվես մարդ է, հասկացվում է (1) տարբերակը:

Եթե համեմատության պատկերը նշանակենք ա, առարկան՝ ա, հատկանիշը՝ ո, իսկ համեմատող բառը՝ Բ տառերով, սխեման կունենա հետևյալ տեսքը.

Թե որրան սերտ են միմյանց հետ կապված աղվես և խորամանկ հասկացությունները, ցույց է տալիս մեր կատարած հետևյալ գիտափորձը: 60 փորձարկվողների առաջարկել ենք նախորոք բաժանված թերթիկների վրա գրել աղվես բառով նախադասություններ. 42 նախադասության մեջ նշված էր խորամանկ հատկանիշը (աղվեսը խորամանկ կենդանի է, մի լինի աղվեսի պես խորամանկ, աղվեսը շատ խորամանկ է, աղվեսի նման խորամանկ մարդիկ շատ կան, աղվեսի դունչն անզամ ճիչեցնում է նրա խորամանկության մասին և այլն), Այսպիսով՝ աղվես և խորամանկ հասկացությունները շատ հաճախ են դուգորդվում: Ինչպիսի՞ աղվես հարցին փորձարկվողների գերակշռող մեծամասնությունը պատասխանել է՝ խորամանկ: Նույն արդյունքն է հաստատվում նաև հակադարձ դուգորդային գիտափորձի միջոցով, որի ժամանակ որպես ազդակ տրված էր խորամանկ բառը, խորամանկ ի՞նչ հարցին 50 փորձարկվողների կեսից ավելին (34-ը) պատասխանել են աղվես բառով:



Հաճախ նույն բառը փոխաբերացվելով տարբեր իմաստներ է արտահայտում: Սուրիկը խոզ է նախադասությունը կարող է տարբեր մեկնաբանություններ ստանալ.



Փոխաբերության իմաստի ընկալումը այսպիսի դեպքերում կախված է արտալեզվական գործոններից՝ հարալեզվաբանական միջոցներից, մակրոկոնտեքստից, խոսքային իրադրությունից:

Լեզվի՝ փոխաբերացման ունակ բառապաշարի միավորները կարելի է բաժանել երկու խմբի. 1) բառեր, որոնք փոխաբերացվում են ըստ մեկ հատկանիշի, 2) բառեր, որոնք կարող են փոխաբերացվել ըստ մի քանի հատկանիշների: Այսպես՝ չի բառը փոխաբերաբար գործածվում է երկու տարբեր՝ «անհասկացող» և «համառ» իմաստներով:

Փոխաբերությունը կարող է արտահայտված լինել բառով կամ բառակապակցությամբ (երկանդամ, եռանդամ, բազմանդամ): Բառակապակցությամբ արտահայտված փոխաբերությունները լինում են անվանական և բայական: Դրանք լինում են ԳԲ (գոյական-բայ) «Քո մազերի մեջ են դեռ իմ ճուղերը լողանում» (ՀԾ, գ. 3, էջ 12), ԱԳ (ածական-գոյական) «ոսկե ամպեր» (ՎՏ, հ. 1, էջ 99), ԳԳ (գոյական-գոյական) կառուցվածքի: ԳԳ բանաձևի մեջ մտնում են ԴԳԴ (գոյական սեռ. հոլովով - գոյական ուղղ. հոլովով) «տեղերի ոսկի» (ՎՏ, հ. 1, էջ 15), և Դու Դու (գոյական ուղղ. հոլովով - գոյական ուղղ. հոլովով) «ուլունի-ուլունի մասուր» (ՀՍ, հ. 2, էջ 383) կառուցվածքները:

Դիտարկենք ԴԳ Դու կառուցվածքի իմաստաբանական առանձնահատկությունները: Այս խմբի մի շարք կապակցություններ, որոնք արտահայտում են հոգեվիճակ, որևէ ապրում, զգացում, ստեղծվում են հետևյալ կերպ. բնության երևույթներ կամ բնապատկեր արտահայտող բառը (ինչպես՝ մշուշ, ժայռ, փոթորիկ, մառախուղ) միանում է հոգեվիճակ, ապրում արտահայտող

բառի հետ (վիշտ, տառապանք, վրդովմունք, թախիծ)⁸, Այս իմաստաբանական ատաղձն ունեն հատկապես Հ. Սահյանի և Հ. Շիրազի շատ փոխաբերություններ, ինչպես՝

Որոտանի եզերքին մայրս կարոտած
Վշուի մշուշը դեմքին՝ պահում է ճամփաս (ՀՍ, հ. 1, էջ 22)։

Գս Գու կառուցվածքի այդպիսի փոխաբերություններ են.
Եվ տառապանքի ժայռեր կուլ տվինք
Մի բեկոր բերկրանք մարսելու համար (ՀՍ, հ. 1, էջ 116)։

Կյանքս չտալի կասկածի մեզին... (ՀՍ, հ. 1, էջ 87)։

Ու ես խեղդվում եմ զղջումիս ծովում (ՀՇ, գ. 3, էջ 87)։

Հիվանդ սիրտը չի տրտնջում, չի ցավում,
Որպես երազ մոռացումի անձավում (ՎՏ, հ. 1, էջ 53)։

Ճեղքել էս դու մահվան ասելը
Եվ տառնապանք քաղցի,
Վրդովմունքի վորոտիկներ,
Խառախուղներ քախձի (ՀՍ, հ. 2, էջ 80)։

Քանի դեռ՝ իմ էլ անհույս վշտի սև ամպն է թանձրանում
(ՀՇ, գ. 3, էջ 162)։

Կուզեմ առնել թշերիս տակ մրբիկներ,
Ատելուրյան վորոտիկներս ահարկու
Մով խոհերիս վրա փշել, գուհս ցրել
Անխորադիր մթնածովներն իմ ոգու... (ՀՇ, գ. 3, էջ 178)։

Փոխաբերության այս տիպի կառուցվածքը կայուն է և տարածված շատ լեզուներում։ Երևույթն ուղադրվել է այն պատճառով, որ լեզվում առկա է նաև հակառակ բնթացքը. բնության երևույթներին մարդկային ապրումներու հատկություններ վերագրելը (անտառո իրզում է)։


Այսպիսով, բնության երևույթները, ռուսարկաները անձնավորվում են. իսկ մարդկային ապրումը հաճախ արտահայտվում է բնությանը վերաբերող բառերի միջոցով. ինչպես՝ զղջումի ծով (հասկացվում է անսահման, անափ, վերջ չունեցող, խորը զղջում)։

Իրենց իմաստաբանական կառուցվածքով 'Խ' 'Կու բառակապակցություններում առանձնանում են այն փոխաբերությունները, որտեղ փոխաբերացվող անդամը արտահայտվում է թանկարժեք բարերի ու աղնիվ մետաղների անվանումներով՝ արծաթ, ոսկի, մարդալիտ, դմրուխտ և այլ բառերով՝ նշելով առարկայի գունային կամ որևէ այլ հատկանիշ. ինչպես՝ անեղների ոսկի (ՎՏ, հ. 1, էջ 15)։

Գս Գու կապակցություններին համանիշ են Գս Գու կառուցվածքն ունե-

⁸ Նշենք, որ առհասարակ գեղարվեստական երկերում բնության երևույթների նկարագրությունն օժանդակում է հերոսի հոգեվիճակի, տրամադրության բացահայտմանը, լրացնում այն։ Մարդու ապրումները ավելի խորն են հասկացվում, երբ նա դիտվում է որպես բնության մի մասնիկը։

ցող փոխաբերությունները, որոշ դեպքերում Գ. Գու. ն կարելի է ստանալ Գ. Գու. ի փոխակերպումով⁹:



Առանձին իմաստային խումբ են կազմում մարմնի մասերի անվանումներով կազմված փոխաբերությունները: Դրանք ստեղծվում են լեզվի մեջ եղած, վաղուց ամրակայված, սովորական դարձած ու շնկատվող փոխաբերությունների համաբանությամբ: Հմմտ. ֆարավի կուպ, ֆերծի հոնֆ և արո-ոի ոտֆ, պահարանի աչֆ:

Մարմնի մասերի անվանումներով կազմված փոխաբերություններով հարուստ է հատկապես Հ. Սահյանի լեզուն. ֆամու ձեռներ (ՀՍ, հ. 2, էջ 197), ֆարավի կուպ (ն. տ., էջ 170), կամուրջի հոնֆ (ն. տ., էջ 56), ֆարայրի հոնֆ (ն. տ., էջ 43), ֆարավի հոնֆ (ն. տ., հ. 1, էջ 39), ֆարայրի աչֆ (ն. տ., էջ 38):

Մարմնի մասերի անվանումներով կազմված են հետևյալ ծավալուն փոխաբերական բառակապակցությունները՝ հացենու ծնկի ծալ (ն. տ., հ. 2, էջ 54), ֆարանձավի կուրացած աչֆի խոռոչ (ն. տ., էջ 54), կնունի շեշտ ալտեր (ն. տ., հ. 1, էջ 237), պուրթ ֆուրերին մաշած կածան (ն. տ., էջ 90):

Հ. Շիրազի բանաստեղծություններում օգտագործված են՝ քոնրի բերան (ՀՇ, գ. 3, էջ 136), հուլսի աչֆեր (ն. տ., էջ 149), վշտի աչֆեր (ն. տ., էջ 25), սրտի աչֆեր (ն. տ., էջ 28), ծաղկի սիրտ (ն. տ., էջ 47) և այլն:

Բանաստեղծական փոխաբերական բառակապակցությունը կառուցվում է իմաստային տեսակետից միմյանցից շատ հեռու, առաջին հայացքից անհամատեղելի բառերի զուգակցումով: Փոխաբերացված անդամի կանխորոշման աստիճանը խիստ փոքր է, իսկ անհատական բանաստեղծական փոխաբերության դեպքում հաճախ այն հասնում է զրոյի: Ինչպես՝

Տարիներն այնտեղ իմ մանկության

Մամուռն մատուռն են կտցահարում (ՀՍ, հ. 2, էջ 208):

Դու նման ես հուշերիս սարսավաճար կանքեղին,

Որ վառեցիր այն զիշեր՝ կոտորածի դժնդակ... (ՀՇ, գ. 2, էջ 59):

Մանկության մամուռն մատուռն և հուշերի սարսավաճար կանքեղ կապակցություններում մատուռն և կանքեղ փոխաբերացված բառերն անհնար է ենթադրել:

Բանաստեղծական պատկեր է ստեղծվում, երբ վարպետորեն զուգակցվում են իմաստային տեսակետից հեռու բառեր, որոնք սովորական, առօրյա լեզվազգացողության մակարդակում միմյանց բոլորովին չեն հիշեցնում: Շատ զործածվելով, փոխաբերական բառակապակցությունը կորցնում է իր

⁹ Н. А. Басилая, Семаснологический анализ бинарных метафорических слово-сочетаний, Тбилиси, 1971, էջ 51—55:

արտահայտչականությունը, անսպասելիությունը և դեդարկետանան իր քրո-
նիկ դառնում է առաջին սովորական ու չեկատվող:

ВОПРОСЫ ПСИХОЛИНГВИСТИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ ПРОЦЕССА МЕТАФОРИЗАЦИИ

АНАИТ ГАЛСТЯН

Резюме

При исследовании языковых явлений, особенно при изучении метафоризации как семантического процесса, следует выйти за пределы языковой системы и рассмотреть его субстациональные основы. Основной метафоризации является изменение смысла слова, употребление слова не в своем основном предметном значении. Слова могут метафоризироваться по сходству формы, звука, блеска, цвета, характера движения предметов. Часто одно и то же слово может метафоризироваться по разным признакам и получать разные новые значения. Метафора может выражаться одним словом или словосочетанием. Часто употребляясь, метафорическое словосочетание теряет свою выразительность, неожиданность и художественную силу. Оно становится обычной и незаметной.